



Զուգահեռանիստ

Զուգահեռանիստի բոլոր նիստերը զուգահեռագծեր են: Յուրաքանչյուր զուգահեռանիստ ունի 6 նիստ: Դրանք չունեն ընդհանուր գագաթ (չունեն նաև ընդհանուր կող) և կոչվում են հանդիպակաց նիստեր: Հանդիպակաց նիստերից երկուսը, օրինակ՝ ABCD-ն կոչվում է զուգահեռանիստի հիմք, իսկ մյուսը կողմնային նիստեր: Զուգահեռանիստն ունի չորս կողմնային նիստ: Զուգահեռանիստն ունի 12 կող, յուրաքանչյուր կողը միաժամանակ գտնվում է երկու նիստերի վրա: Զուգահեռանիստի յուրաքանչյուր գագաթ միաժամանակ գագաթ է նրա երեք նիստերի համար: Զուգահեռանիստն ունի 8 գագաթ: Զուգահեռանիստի գագաթները կոչվում են հանդիպակաց, եթե դրանք չեն գտնվում նույն նիստի վրա:

Հատկությունները

Զուգահեռանիստի նիստերը, որոնք ունեն ընդհանուր կող, կոչվում են կից նիստեր, իսկ ընդհանուր կող չունեցողները՝ հանդիպակաց նիստեր:

Զուգահեռանիստի հանդիպակաց նիստերը զուգահեռ են և հավասար:

Զուգահեռանիստի անկյունագծերը հատվում են մի կետում և այդ կետով կիսվում են:

Ուղղանկյունանիստ

Ուղղանկյունանիստ (հիմքերը ուղղանկյուններ են)

Ուղղանկյունանիստ (հիմքերը ուղղանկյուններ են)

Ուղիղ զուգահեռանիստ է կոչվում այն զուգահեռանիստը, որի կողմնային կողերը ուղղահայաց են հիմքերին:

Ուղիղ զուգահեռանիստը կոչվում է ուղղանկյունանիստ, եթե նրա հիմքերը ուղղանկյուններ են:

Ուղղանկյունանիստի անկյունագծերը հավասար են:

Ուղղանկյունանիստի ընդհանուր գագաթ ունեցող երեք կողերի երկարությունները կոչվում են ուղղանկյունանիստի չափումներ

Չուգահեռանիստ

Ուղղանկյունանիստի անկյունագծի քառակուսին հավասար է նրա երեք չափումների քառակուսիների գումարին: $d^2 = a^2 + b^2 + h^2$

Ուղղանկյունանիստի կողմնային մակերևույթի մակերեսը հավասար է նրա հիմքի պարագծի և բարձրության արտադրյալին: $S_k = 2(a+b)h$

Ուղղանկյունանիստի լրիվ մակերևույթի մակերեսը հավասար է կողմնային մակերևույթի մակերեսի և հիմքերի մակերեսների գումարին: $S_l = 2(a+b)h + 2ab$

Ուղղանկյունանիստի ծավալը հավասար է **Խորանարդ**, կանոնավոր վեցանիստ է, բոլոր նիստերը [քառակուսիներ](#) են: Ունի 12 կող, 8 գագաթ, ամեն գագաթում միանում են փոխուղղահայաց 3 կողեր: Խորանարդը [չուգահեռանիստի](#) մասնավոր ձև է:

Խորանարդ

Խորանարդ, կանոնավոր վեցանիստ է, բոլոր նիստերը քառակուսիներ են: Ունի 12 կող, 8 գագաթ, ամեն գագաթում միանում են փոխուղղահայաց 3 կողեր:

Խորանարդը չուգահեռանիստի մասնավոր ձև է:

Բնութագրական տվյալները

a երկարության կող ունեցող խորանարդի բնութագրական տվյալներն են՝

